ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքային տնտեսության զարգացման համար գլխավոր նախապայմաններից մեկը փոքր ֆերմերների կենսամակարդակը մատչելի դարձնել, բարելավել և կայունացնելն է՝ նրանց հնարավորություն տալով ուժեղացնել իրենց դերն ու ազդեցությունը գյուղատնտեսական արժեշղթայում, լուծել որոշակի խնդիրներ՝ հաղթահարել գյուղմթերքի իրացման դժվարությունները, գյուղտեխնիկայի շահագործումը, վառելանյութերը, սերմերը, պարարտանյութերը և այլ ռեսուրսներ: Ուստի այս ամենն իրագործելու համար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել գյուղական համայնքներում ակումբներ ստեղծելու ուղղությամբ՝ միավորելու մարդկանց մի գաղափարի շուրջ, այն է՝ կամավոր կերպով հիմնել ինքնավար ընկերակցություն՝ կազմակերպելով ու վերահսկելով իրենց ընդհանուր սոցիալական, տնտեսական և մշակութային կարիքներն ու ձգտումները: Ակումբներ ստեղծելու նպատակները հիմնականում տնտեսական են. հեշտ գործընթաց չէ համայնքային ակումբների ստեղծումն ու հաջող զարգացումը:

Ընդհանուր առմամբ այն ժամանակատար և բարդ գործընթաց է: Այս գաղափարը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է առաջնորդվել մի քանի հիմնական կետերով, այն է.

- ժողովրդավարություն
- ինքնապատասխանատվություն
- համերաշխություն
- հավասարություն
- համախմբվածություն
- փոխադարձ օգնություն:

Կամավոր կերպով բաց անդամակցություն

Դրանք այն մարդիկ են, ովքեր ի վիճակի են և պատրաստակամ պարտավորություններ ստանձնելու որպես ակումբի անդամ՝ առանց սեռային, սոցիալական, ռասսայական, քաղաքական կամ կրոնական որևէ խտրականության:

Անդամների գործունեության ժողովրդական վերահսկողություն

Այն ժողովրդի կողմից վերահսկվող կառույց է, որտեղ մարդիկ ակտիվորեն մասնակցում են գյուղական համայնքային քաղաքականության մշակմանն ու որոշումների կայացմանը և ունեն հավասար ձայնի իրավունք:

Անդամների տնտեսական մասնակցություն

Անդամները նպաստում են իրենց ակումբի ունեցվածքի ձևավորման գործում և դրա օգտագործման նկատմամբ ունեն հավասար իրավունքներ:

Անկախություն և ինքնավարություն

Այն իրենց իսկ անդամների կողմից ինքնավարությունն ու անկախությունը պահպանելու պայմանով ձևավորված վերահսկվող ինքնավար միություն է:

Կրթություն, տեղեկատվություն և վերապատրաստում

Այն կրթում, իրազեկում և վերապատրաստում է հանրությանը՝ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելով ստեղծված կազմակերպության բնույթի և օգուտների մասին:

Համայնքի մասին մտահոգություն

Հիմնվելով իրենց անդամների կողմից հաստատված քաղաքականության վրա՝ բոլորն աշխատում են հանուն համայնքների կայուն զարգացման:

Հարկ է իմանալ

Գյուղատնտեսական ակումբներ ստեղծելուց առաջ հարկավոր է հստակ պատկերացում ունենալ ակումբների ինքնության, արժեքների, սկզբունքների, նրա առավելությունների ու տարբերությունների մասին: Դրանց չիմացությունը հաճախ բերում է ծրագրի իրականացման ձախողման:

Սեփական ուժերով արդյունքի հասնելու նախաձեռնությունների հետաքրքրաշարժ օրինակներ կան.

Ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ նմանատիպ կոլեկտիվ ձեռնարկություններն ապահովում են շուրջ 3 միլիարդ մարդու, այլ խոսքով՝ աշխարհի բնակչության կեսի կենսապայմանները.

- Նորվեգիայում՝ կաթի 99%-ը
- Նոր Զելանդիայում՝ կաթի արտադրության և կաթնամթերքի արտահանման 95%-ը, ինչպես նաև մսամթերքի շուկայի 70%-ը
- Ուրուգվայում՝ արտադրվող կաթի 90%-ը, մեղրի 34%-ը և ցորենի 30%-ը, իսկ դրանց 60%-ն էլ արտահանվում է շուրջ 40 երկրներ
- Սլովենիայում՝ կաթի արտադրության 72%-ը, տավարի մսի 79%-ը, ցորենի 45%-ը և կարտոֆիլի 77%-ը
- Քենիայում՝ կաթնամթերքի շուկայի 76%-ը
- Դանիայում՝ մանրածախ շուկայի ավելի քան 30%-ը:

Այսպիսի բազմաթիվ օրինակները ցույց են տալիս, որ համայնքային ակումբների ու կոոպերատիվների ստեղծումն ու դրանց ընդլայնումը կարևորագույն դեր կարող են ունենալ Հայաստանի գյուղատնտեսության զարգացումը որակապես նոր աստիճանի հասցնելու գործում:

Աղբյուր՝ www.ica.coop

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ Ա
ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՆԱԽ

- Համայնքային ակումբները պետք է տեսանելի և շոշափելի օգուտներ ապահովեն իրենց անդամների համար:
- Պետք է ընտրվեն բիզնես-քաղաքակա-նություն վարելու ընդունակ փորձառու և շահագրգիռ ղեկավարներ:
- Ձևավորվող ակումբների կառուցվածքն ու կառավարումը պետք է համապատասխանի անդամների կարողություններին, ունակություններին ու հմտություններին, ինչպես նաև նրանց շահագրգռվածությանը:

ԱԿՈՒՄԲՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՄԻԱՍԻՆ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆերմերների համատեղ գործողության արդյունքում նրանց հնարավորություն է տրվում դժվարությունները միայնակ հաղթահարելու փոխարեն օգտվել համատեղ աշխատանքի մի շարք առավելություններից: Համատեղ աշխատանքի գործունեության պայմաններում ֆինանսական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունն ավելանում է, և բուն գործընթացն ավելի դյուրին է դառնում, քան անհատական գործունեության արդյունքում՝ հզորացնելով մարդկանց ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական կարողությունները:

Համատեղ գործունեության ընթացքում.

- կբարձրանա գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետությունը և ոլորտում տնտեսվարողների մրցունակությունը
- կընդլայնվեն գործող համայնքային ակումբների կարողությունները
- համատեղ գործունեությունը կնպաստի գյուղական համայնքների զարգացմանը
- կբարձրանա գյուղական բնակչության զբաղվածության մակարդակը

- կավելանան գյուղատնտեսական մթերքների և դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ծավալները, որի արդյունքում էլ՝ բնակչության եկամուտները, և կբարձրանա երկրի պարենային անվտանգության մակարդակը
- պայմաններ կստեղծվեն հողային ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործման համար
- գյուղացիական ակումբների և կոոպերատիվների միջոցով հեշտությամբ կլուծվեն գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների և մատակարարումների հարցերը, արտադրանքի իրացումը, արտահանումը, արտադրության նախընտրելի մասնագիտացումը, նոր տեխնոլոգիաների ներդրման, արտադրության վերազինման խնդիրները:

Համայնքային ակումբների ստեղծումն անհատ ֆերմերներին լայն հնարավորություններ կընձեռի՝ սկսած սեփական տնտեսության եկամուտների ավելացում-բարձրացումից մինչև սոցիալական ու բնապահպանական պատասխանատվությունը՝ այդպիսով նպաստելով ընդհանուր արժեքներով առաջնորդվելու, համայնքների բարեկեցությունը ապահովելու գյուղացու պատրաստակամությանը: